

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի
գիտական խորհրդի 2013թ. սեպտեմբերի 13 -ի նիստի
(արձանագրություն N 2)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013թ. մայիսի 2-ի 471/-Ն որոշմամբ հաստատված <<Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ՝ համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Հանել 2.2 կետը:

2. 3.1 կետը կարդալ.

3.1.Գիտական խորհուրդը՝

ա) հաստատում է իր կանոնակարգը,

բ) հատկացված ընդհանուր չափաքանակների շրջանակներում, հաստատում է վճարովի հիմունքներով ըստ մասնագիտությունների ընդունելության տեղերի նախագծեր, ինչպես նաև՝ ուսման վարձավճարների չափերը,

գ) քննարկում և հաստատում է համալսարանի՝ օտարերկրյա պետությունների հետ կապերի ուղղությունները, միջազգային համագործակցության ծրագրերը,

դ) համալսարանի ռեկտորի ներկայացմամբ՝ որոշում է ստեղծել, վերակազմակերպել, լուծարել ֆակուլտետներ, գիտահետազոտական ինստիտուտներ, լաբորատորիաներ, կենտրոններ, ամբիոններ և օրենքով չարգելված այլ կառուցվածքային ստորաբաժանումներ և հաստատում է նշված կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը,

ե) կազմակերպում է համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից խորհրդի անդամության համար առաջադրված թեկնածուների ընտրությունները և ներկայացնում է իր կողմից ներկայացված խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման վերաբերյալ առաջարկություններ,

զ) հաստատում է համալսարանի ներքին կարգապահական կանոնները,

է) հաստատում է ուսումնական պլաններն ըստ մասնագիտությունների, որոնք ներկայացվում են լիազոր մարմին,

- ը) քննարկում է համալսարանի գիտական գործունեության գլխավոր ու հեռանկարային ուղղությունները, լսում գիտական հաղորդումներ համալսարանում կատարվող գիտահետազոտական և ուսումնական աշխատանքների արդյունքների մասին,
- թ) հաստատում է համալսարանի ֆակուլտետի դեկանի, ամբիոնի վարիչի և պրոֆեսորադասախոսական կազմի ընտրությունների կարգերը,
- ժ) պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրության կարգի համաձայն կազմակերպում է թափուր տեղերի համար անցկացվող մրցույթները և հաստատում է դրանց արդյունքները,
- ժա) գիտական խորհրդի կողմից հաստատված կանոնակարգով՝ սահմանված դեպքերում և կարգով կազմակերպում է ֆակուլտետի դեկանի և ամբիոնի վարիչի ընտրությունները և հաստատում դրանց արդյունքները,
- ժբ) շնորհում է համալսարանի պատվավոր կոչումներ, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ, պարգևատրում համալսարանի մեդալով, շքանշանով, պատվոգրով,
- ժգ) շնորհում է գիտական կոչումներ,
- ժդ) իրականացնում է համալսարանի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ լիազորություններ, որոնք բխում են ՀՀ օրենսդրությունից և համալսարանի կանոնադրությունից:

3. 4.3 կետի ա) ենթակետը կարդալ.

ա) գիտական խորհրդի որոշումներն ընդունվում են գիտական խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Պրոֆեսորադասախոսական և գիտական պաշտոնների զբաղեցման և գիտական կոչումների շնորհման որոշումները ընդունվում են փակ քվեարկությամբ, մնացած որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ: